• **Կազմակերպության տվյալներ** • Անվանում,հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր Հետազոտության թեմա	**Հայի ինքնության բացահայտումը Վիլյամ Սարոյանի «Նոնենիները» պատմվածքում**
Ուսուցչի տվյալներ • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	**Մերի Սամվելի Հովհաննիսյան** **Բանասեր, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի** **099 20 08 76** **mary.shovh@gmail,com** **մայրենի, հայոց լեզու և գրականություն** **5-9-րդ դասարաններ**
• **Ուսումնական հաստատության տվյալներ** • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	**Ա.Պուշկինի անվան հ8 հիմնական դպրոց** **Մոսկովյան 17** **010-564931** **pushkinschool8@mail.ru**

Բովանդակություն

Հետազոտական աշխատանք

Տիտղոսաթուղթ

Բովանդակություն

Ներածություն

Եզրակացություններ, առաջարկություններ

Օգտագործված գրականության ցանկ

Հավելվածներ

Ներածություն

Հետազոտական հարցը	**Ինչպես սովորողին հասու դարձնել հայի ինքնության բացահայտմանը Ուիլյամ Սարոյանի «Նռնենիները» պատմվածքում:**
Նպատակը	• Ուսումնասիրել և բացահայտել պատմվածքի պատմական և մշակութային համատեքստը: • Աջակցել դասավանդողներին Սարոյանի «Նռնենիները» պատմվածքը դասավանդելիս: Լրացնել ուսումնական նյութերի պաշարները: • Համակարգել պատմվածքի դասավանդման քայլերը: • Գտնել և մշակել հայի ինքնության դրսևորումները հասկանալու, առանձնահատկություններն դասավանդելու մեթոդներ և հնարներ:
Հետազոտության խնդիրները	• Ուսումնասիրել հեղինակի կենսագրության այն դրվագները, որոնք կարող էին իրենց դրսևորումը գտնել պատմվածքում:

	• Հիմնավորել հեղինակի կենսագրության խոր ազդեցությունը և դրսևորումները ստեղծագործությունների թեմանում։ • Ներկայացնել պատմվածքի դասավանդման և հայի ինքնության բացահայտման մոտեցումներ։ • Կերպարների վարքագծի վերլուծության միջոցով ներկայացնել հայի նկարագրի առավել ամբողջական պատկերը։ • Մշակել ուսումնական նյութեր / դասի պլաններ, աղյուսակներ, սահիկաշար/
Հետազոտության վարկածը	***Անկախ նրանից, թե հայը որտեղ է գտնվում, նա ամեն գնով փորձում է պահել իր ինքնությունը:***
Ո՞ր առանցքային կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնառությունը։	Լեզվական գրագիտություն Մշակութային կարողունակություն (արժևորել սեփական ինքնությունը,ճանաչել հայ և համաշխարհային գրականությունն ու արվեստը, ձևավորել մշակութային գրագիտություն և ճաշակ)
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակը, սեռային բաշխումը/	11-12 տարեկան պատանիներ / 7-րդ դասարանցիներ
Հետազոտության օբեկտը	Հայոց ինքնությունն է և արժեհամակարգը։
Հետազոտության առարկան	Հայոց ինքնության դրսևորումները Ուիլյամ Սարոյանի «Նոնենիները» պատմվածքում և արժեհամակարգի ձևավորման հիմքերը, որոնք կնպաստեն սովորողների ազգային ինքնության ընկալմանն ու ձևավորմանը։
Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (**օրինակ՝**	Որակական /էմպիրիկ/ հետազոտություն՝ դիտարկման միջոցով Դիտումը մանկավարժական երևույթների և գործընթացների նպատակաուղղված, համակարգված ընկալումն ու

քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով և այլն)	արձանագրումն է։ Դիտումը հնարավորություն է ընձեռում անմիջականորեն ընկալել սովորողների վարքագիծը, երևույթներին ու գործընթացներին հետևել կոնկրետ պայմաններում և ժամկետներում։ Դիտարկման մեթոդն ունի մի շարք յուրահատկություններ. տեղեկություններն ստացվում են ակտիվ փոխազդեցության և հետազոտողի երկարատև ընդգրկվածության արդյունքում, երևույթներն ուսումնասիրվում են սեփական կոնտեքստում և առանցքային տեղեկությունների միջոցով։ Հետազոտողը մանկավարժական իրավիճակները կարծես «ընթերցում» է ըստ դրանց արտաքին դրսևորումների։ Սույն հետազոտության շրջանակներում նախատեսել եմ դիտարկել գեղարվեստական ստեղծագործության արտահայտած գաղափարների ազդեցությունը սովորողների աշխարհայացքի, մտածելակերպի, արժեքային համակարգի վրա։
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	1 -2 շաբաթ
Թեմայի արդիականությունը	Լինելով հինավուրց մշակույթի կրող՝ մենք միշտ հպարտացել ենք, որ դարեր շարունակ տարբեր փորձություններում, ոչնչացման վտանգի տակ, մենք պահպանել ենք մեր հիմքերի հիմքը հանդիսացող հայոց լեզուն, չենք ուրացել մեր հավատքը, չենք դավաճանել Հայկ Նահապետի պատգամներին և աշխարհի հորձանուտում պահպանել ենք մեր ինքնությունը։ Սակայն ժամանակակից աշխարհում, մի կողմից լայն հնարավորություններ են ստեղծվում տարբեր պետությունների ու ժողովուրդների միջև երկխոսություն հաստատելու և սոցիալ-

	մշակութային խոչընդոտները հաղթահարելու համար, մյուս կողմից՝ մշակութային հավասարեցման, բարոյական ու արժեքային համակարգերի վերափոխման գործընթացներ, միտումներ. համամարդկային արժեքների միասնական հարթակի ձևավորում և ողջ մարդկության ազգային ինքնության արդիականացում։ *Ազգային ինքնության* խնդիրը մեզ՝ հայերիս համար կարևոր է առաջին հերթին այն պատճառով, որ մեր հայրենակիցների զգալի մասն ապրում է հայրենիքից հեռու, որտեղ ուծացման վտանգն ավելի մեծ է։ Նույն խնդրի առաջ է կանգնած հայ հասարակության այն հատվածը, որն ապրում է հայրենիքում և կապված չէ ազգային արժեքների հետ։

Հիմնական բովանդակություն

1. Հեղինակի՝ Ուիլյամ Սարոյանի կենսագրության ուսումնասիրություն։

2.Սարոյանը որպես օտարագիր հայ հեղինակ, որը հայտնի է իր յուրահատուկ ոճով և մարդկային բնության ուսումնասիրությամբ, պատմվածքում ներկայացված ժամանակաշրջանը և հայ գաղթականության վիճակը /20-րդ դարի սկիզբ/։

3.Սարոյանի ստեղծագործության հիմնական բնութագիրը։

4. Գլխավոր հերոսները և նրանց հարաբերությունները։

5.Նռնենու նշանակությունն ու խորհուրդը։

Առաջին դասը, իհարկե, Ուիլյամ Սարոյանի կենսագրությանն ու ստեղծագործության ընդհանուր բնութագրին է նվիրվում։

Գրողի կենսագրությունը կարող է աշակերտների մեջ հետաքրքրություն առաջացնել և՛ նրա անձի, և՛ նրա գրականության նկատմամբ։ Հեղինակի կենսագրությունը գեղարվեստական երկերի յուրացման բանալին է։ Կենսագրության ուսումնասիրման հիմնական նպատակը հեղինակի և նրա ստեղծագործության մասին ամբողջական պատկերացում ստեղծելն է, հեղինակի օրինակով՝ մարդասիրության ոգի, բարոյական բարձր հատկություններ՝ ազգասիրություն, հայրենասիրություն, պատվախնդրություն, բարություն, լիարժեք ու ներդաշնակ մարդու բարոյակամային հատկանիշներ դաստիարակելը։

Գրողի խոսքի և գործի ազդեցությունը աշակերտի հոգևոր աշխարհի վրա առկա է մշտապես։ Գլխավորը կենսագրության և գեղարվեստական գործունեության կապի բացահայտումն է։ Կարևոր է բացահայտել՝ ինչպես է փոխվում հեղինակի վերաբերմունքը իր, կյանքի, արվեստի նկատմամբ, ինչն է այդ վերաբերմունքի մեջ անփոփոխը։ Գրողի կյանքն ու ստեղծագործությունը հիմք են տալիս արծարծելու գեղագիտական, ինչպես նաև անձի և հանգամանքների կապի մասին հարցեր, քննարկել հեղինակի հոգուն խորթ իրականությանը հակադրվելու խնդիրը։

Սարոյանի կենսագրությունը նախընտրելի է ներկայացնել հետևյալ պլանի համաձայն՝ համեմելով թե՛հեղինակի մտքերով, թե՛ այլ մեծերի կարծիքներով։

- Ո՞վ է Սարոյանը։
- Արմատները՝ ծնունդը։
- Որբ մանկություն օտար հողում։
- Աշխատանք ուսումի փոխարեն։
- Գրական փորձ և ճանաչում։
- Սարոյանը 1500-ից ավելի երկերի հեղինակ։
- Հերոսները։
- Ես հայ գրող եմ։

- Այցելություն Երևան։
- Մահը։ Կտակը։

Դասը սկսում ենք աշակերտներին ծանոթացնելով դասի նպատակներին, խնդիրներին։ Այնուհետև խթանման փուլում ցուցադրում ենք Երևանի կենտրոնական մասում տեղադրված Սարոյանի արձանի լուսանկարը և «Մտքերի տարափ» մեթոդի օգնությամբ փորձում ենք բացահայտել, թե աշակերտներն ինչ գիտեն Բարի հսկայի մասին։

Աշակերտները լրացնում են ԳՈՒՍ աղյուսակի առաջին և երկրորդ սյունակները, իսկ երրորդը՝ դասի վերջում։ /հավելված 1/

Իմաստավորման փուլը սկսում ենք Ուիլյամ Սարոյանի մասին Գ. Մահարու, Պ. Սևակի, Մ.Սարյանի և այլ մեծերի կարծիքներն ընթերցելով և քննարկելով։ Նախօրոք պատրաստված թերթիկները՝ մեծերի մտքերով ու կարծիքներով, բաժանվում են աշակերտների խմբերին։ Նրանք մի քանի րոպե կարդում ու ծանոթանում են, ապա քննարկում և ներկայացնում դասարանին՝ մեկնաբանելով, թե յուրաքանչյուր հեղինակ Սարոյանին ինչ տեսանկյունից է ներկայացրել ու մեծարել, որ հատկանիշն է կարևորել։

Դժվարին մանկություն և նույնքան դժվարին պատանեկություն, պատանի, երիտասարդ, ապա չափահաս Սարոյանը պիտի ստեղծեր իր գրական-ստեղծագործական սարոյանական աշխարհը, որի բնակիչները պիտի լինեին իր ճանաչած մարդիկ: Խոր է ապրել կյանքը համբավավոր գրողը, խոր է զգացել կյանքի հակասությունները և դժվարությունները, բայց այդ ծանրությունը նա տարել է միշտ լավատես ժպիտով, գրեթե մանկական անմիջականությամբ, միշտ իրական կյանքում լավը որոնելու և անպայման գտնելու ցանկությամբ տառապող հոգու մակընթացությունով և տեղատվություններով,հաճապ հակասական,չարի դեմ անզեն ու անզոր,բայց միշտ լավատես,բայց միշտ հումանիստ:

Գ.Մահարի

Սարոյանն օժտված է մի այնպիսի ձիրքով,որ շատ քչերն են ունենում՝մարդկանց սիրելու դժվարագյուտ տաղանդով: Նա մարդկանց չի դատապարտում,այլ սիրում է նրանց... Նրա բնավորության ամենաբնորոշ գիծը բարությունն է: ...Նրա երկերը լեցուն են հազար ու մի զրկանքներով,և նրա հերոսները հազար ու մի դժվարություն են կրում: բայց այդ ամենը ջերմացած են

սրտի մի այնպիսի կրակով,որ ապրել են ուզում,ոչ թե մեռնել,փառաբանում են կյանքը և ոչ թե անիծում... Սարոյանը հավատում է աշխարհի ու մարդկանց լավացմանը: Այդպիսին է Սարոյանը:

Պ.Սևակ

Ես լիապես երջանիկ մարդ եմ համարում Սարոյանին: Անընդհատ զարմանալու ընդունակությամբ է օժտված այդ մարդը: Երջանիկ է այն մարդիկ, որ տարիքն առնելու հետ չեն կորցնում զարմանալու ընդունակությունը: Սարոյանը հենց այդ մարդկանցից է, ուղղակի մեծ երեխա է և այն էլ՝ հանճարեղ: Զարմանքով գրում է բաների մասին,որոնք,թվում է,այնքան հասարակ են,պարզ,սովորական,որ հետաքրքրություն չեն ներկայացնում: Բայց դրանց խորքում այնքան պայծառ իմաստություն,փիլիսոփայական վեհություն,զգացմունքների, տպավորությունների այնքան բազմազանություն և մեծ արվեստ,հրճվանք կա: *Մ.Սարյան*

«Ի՞նչն է հատկանշական Սարոյանի համար որպես գրողի: Սարոյանը բուռն է, պոռթկուն և խելացի, նա թախծոտ է, քնքուշ ու մարդկային, նա միամիտ է ձևանում, սակայն բնավ միամիտ չէ...: Նա ատում է դաժանությունն իր բոլոր դրսևորումներով, նա հարգում է մարդկային արժանապատվությունն ու հպարտությունը»:

ամերիկյան քննադատ Բ. Ռասկո՝ *«Խիզախ պատանին թռչող ճոճաձողի վրա և այլ պատմվածքներ» (1934)* առաջին գրքի առթիվ

Կարճ քննարկումից հետո ներկայացնում ենք Ուիլյամ Սարոյանի կենսագրության հետաքրքիր փաստերը: Հակիրճ դասախոսությանը զուգընթաց ներկայացվում է սահիկաշար, որն ավելի պատկերավոր է դարձնում խոսքը, սովորողները տեսնում են հեղինակի տարբեր տարիների լուսանկարներ, թե՛ Սարոյանի ժամանակաշրջանի Ֆրեզնոյի, թե՛ հին Բիթլիսի պատկերները:

Հատուկ ուշադրություն է սևեռվում Սարոյանին այն մտքերի վրա , որոնցում բացահայտվում է նրա հայրենասիրությունը, հայի կերպարը: Կարևոր է ներկայացնել, որ Սարոյանը օտարագիր հայ գրող է: Սփյուռքում հայ գրողների մի մասի ստեղծագործության լեզուն օտար է: Օտարագրությունը «մայր» մշակույթի պատմության մի մասն է. այն մի երևույթ է, որ արտաքուստ «յուրային» չէ, սակայն ունի ազգային արմատներ: Օտարագիր հայ գրողներին հետաքրքրել են սեփական ժողովրդի

ճակատագիրը, Մեծ եղեռնը, ազգային արմատների ու դիմագծի որոնումը, հայի տեսակն ու ինքնության պահպանումը։

«Ես Կալիֆոռնիայի հայ եմ, Փարիզի հայ եմ, Լոնդոնի հայ եմ, Երևանի հայ եմ, ամեն տեղ հայ եմ և ամեն տեղ նույն մարդն եմ…»:

Ուիլյամ Սարոյանը ծնվել է 1908 թվականի օգոստոսի 31-ին բանաստեղծ Արմենակ Սարոյանի և նրա կնոջ՝ Թագուհու ընտանիքում՝ գաղթած Բիթլիս քաղաքից (ներկայիս Թուրքիա), որտեղ, ըստ Սարոյանի, հայերի հետագա կյանքն անհնար էր։ Մանկությունն անցկացրել է Ֆրեզնոյում (Կալիֆոռնիայի նահանգ)։ Նահապետական մի ընտանիք, որ, նետվելով օտար միջավայր, մինչեւ վերջ անխաթար պահեց հայրենի երկրի վարքն ու բարքը, բնօրրանից եկող կենցաղը, բառն ու բանը, ավանդական զրույցները։ Ոգի էր դա, հայկական ոգի, որ մտավ Սարոյանի ներաշխարհ և ուղեկցեց նրան ողջ կյանքում։

1911 թվականին երեսունյոթամյա Արմենակ Սարոյանը մահանում է, և Վիլյամ Սարոյանը եղբոր՝ Հենրիի, և քույրերի՝ Զաբելի ու Կոզեթի հետ տեղափոխվում է որբանոց։ Երբ մայրը պետք է երեքամյա Վիլյամին թողներ որբանոցում։ Մոտ 10 տարի ապրելով մանկատանը՝ նույն ճանապարհով Վիլյամն իր քույր-եղբայրների հետ մի օր վերադարձավ տուն։ Սակայն վերադարձը մանկատնից չդարձավ վերադարձ դեպի անհոգ կյանք։ Աշխատանք հեռագրատանը։ Վիլյամը ստիպված էր օգնել մորը։

«Մի օր հարևան երեխաներն ինձ կանչեցին բեյսբոլ խաղալու, և ես, շատ լավ գիտակցելով, որ պետք է մնացած թերթերը վաճառեմ, չկարողացա հրաժարվել այդ առաջարկից և միացա ընկերներիս։ Հանկարծ լսեցի մորս ձայնը՝ ինչո՞վ ես զբաղված։ Ես խաղում էի, մայրի՛կ,- պատասխանեցի ես։ Մորս մեկ հայացքը բավարար եղավ, որ վերադառնամ աշխատանքիս։ Այդ օրվանից հետո հասկացա, որ ես տարբեր եմ մյուս երեխաներից»։

Սարոյանը կանոնավոր կրթություն չի ստացել։Սակայն ինքնակրթությամբ Սարոյանը նվաճեց իմացության բարձունքներ, եղավ իր ժամանակի ամենազարգացած մարդկանցից մեկը։

«Յոթ տարեկանից սկսեցի լրագրեր վաճառել մայթերում ու խաչմերուկներում։ Երրորդ դասարանում առաջին անգամ վաստակեցի դպրոցի ամենաչար տղայի համբավը, ու ինձ հաճախ անկյուն էին կանգնեցնում, հայհոյում, քաշում մազերս ու ականջներս և, ի վերջո, վռնդեցին դպրոցից…»

Ուիլյամը հորը չէր հիշում ու հորից շատ բան չէր պատմում մայրը: Սակայն 1922 թվականին, երբ Ուիլյամը 14 տարեկան էր, մայրը նրան հանձնեց հոր թղթերի ու տետրերի մի կապոց: Դա Ուիլյամի համար իր և հոր առաջին հանդիպումն էր՝ հասունության հանդիպումը: Այդ հանդիպման ժամանակ էր, որ Ուիլյամը իմացավ իր հոր ով լինելը: Հայրը բանաստեղծ էր, բանաստեղծություններ ու պոեմներ էր գրել «հին հայրենիքի» լեզվով: Օրեր շարունակ նա կարդում էր հոր գրվածքները, հետո ուրիշ գրողների, հետո էլի ու էլի, և վերջում հասկացավ, որ չգրել չի կարող:

«Ես գրում եմ փոքր տարիքից, թեպետ այն ժամանակ ոչ մեկին չէի խոստովանում, որ ուզում եմ գրող դառնալ: Մերոնք՝ բիթլիսցիները, հատկապես նրանք, ովքեր հիմնավորվել էին Ամերիկայում, գրողներին լուրջ չէին վերաբերվում: Նրանց համար կարևորն այն էր՝ կարո՞ղ ես փող աշխատել, թե՞ ոչ: Իմ հորեղբայր Արամն ասում էր.«Դու այդ հիմարությունը թո՛ղ»: Բայց ես չէի լսում…»:

1926 թվականին տասնութամյա Ուիլյամը, որը մինչ այդ հասցրել էր փոստատար, սնագործ բանվոր և Սան Հոակինի ֆերմաներում ու խաղողի այգիներում սեզոնային մշակ աշխատել, թողնում է հարազատ ամերիկա-հայկական Ֆրեզնոն ու գնում Սան Ֆրանցիսկո: Աշխատում է որպես հեռագրատան ծառայող, սպորտային ապրանքների խանութի վաճառող, պահեստի բանվոր: Ոչ մի տեղ երկար չի մնում, ապրում է վարձով տրվող սենյակներում:

Առաջին անգամ իր ստեղծագործությունը տպագրել է 1933 թվականին Բոստոնի «Հայրենիք» շաբաթաթերթում՝ Սիրակ Գորյան ստորագրությամբ: Լայն ճանաչում է ձեռք բերել *«Խիզախ պատանին թռչող ճոճաձողի վրա և այլ պատմվածքներ» (1934)* առաջին գրքով:

Առանձնահատուկ ուշադրություն եմ դարձնում այն փաստի վրա, որ գրողի ձևավորման մեջ մեծ դեր է խաղացել ինքնակրթությունը, ամերիկյան ու համաշխարհային գրականության ընթերցումը, հարազատ ժողովրդի հոգևոր մշակույթի, ավանդույթների, պատմության տարրերի ժառանգումը, հայկական շրջապատի ազգային ինքնատիպությունը: Ընթերցողը սիրեց գիրքը, գրախանութներում այն երկար չմնաց դարակներին և դատարկվող դարակները Վիլյամին ստիպեցին մտածել շարունակության մասին:

«1935թ.—ին, երբ լույս տեսավ իմ առաջին գիրքը, ես կյանքում առաջին անգամ ինձ զգացի գրեթե հարուստ: Եվ այդ ժամանակ որոշեցի ուղևորվել Հայաստան: Ուզում էի տեսնել իմ ժողովրդին, իմանալ, թե ինչի մասին են խոսում իմ հայրենակիցները: Ինչպես են նրանք քայլում փողոցներով, ինչ են սիրում: Ուզում էի նայել Բիթլիսի ուղղությամբ»:

1935-ից սկսած Սարոյանը չորս անգամ եղել է Խորհրդային Հայաստանում, 1964-ին այցելել է նաև իր նախնիների քաղաքը՝ Բիթլիս, ինչի մասին հետագայում (1975) գրել է «Բիթլիս» պիեսը։

1939 թվականին Վիլյամ Սարոյանը վեց օրվա ընթացքում գրում է «Քո կյանքի ժամերը»։ Այս ստեղծագործության շնորհիվ գրողն արժանացավ Պուլիցերի և նյույորքյան քննադատների հեղինակավոր գրական մրցանակներին։ 1940 թվականին Սարոյանը հրաժարվում է առաջին մրցանակից՝ հայտարարելով, որ «Առևտուրը իրավունք չունի հովանավորելու արվեստը»։

«Կյանքիդ ժամերն ապրիր այնպե՛ս, որ այդ քաղցր ժամերին ո՛չ քեզ, ո՛չ էլ կողքիդ ապրողներին չդիպչեն ապականությունն ու մահը: Ամենուրեք փնտրիր բարի՛ն ու հենց հայտնաբերես, հանի՛ր լույս աշխարհ իր թաքստոցից. թող բարությունը լինի անկաշկանդ ու չամաչի ինքն իրենից:…. Արհամարհի՛ր չարիքն ու անազնվությունը, բայց ոչ չար ու անազնիվ մարդկանց. հասկացի՛ր սա: Մի՛ ամաչիր բարի ու քնքուշ լինել…

Կյանքիդ ժամերն ապրիր այնպե՛ս, որ քեզ բաժին ընկած ժամերին չավելացնես աշխարհի վիշտն ու տառապանքը, այլ ժպիտով ընդունես նրա անսահման լույսն ու խորհուրդը:»

Գրական կյանքի առաջին տասնամյակում Սարոյանը գրել է մի քանի հարյուր պատմվածք, որոնց մեծ մասն ամփոփվել է տասից ավելի ժողովածուներում։ Սարոյանը հատկապես կարճ պատմվածքի, նորավեպի ժանրում ներմուծել է թարմ թեմատիկա, արդիական հնչողություն ունեցող մարդասիրական բարոյական մոտիվներ, պատումի նոր ձևեր, քնարականությամբ ու հումորով լի հնչերանգներ, բնականություն և ճշմարտացիություն, պատկերների ու կերպարների գունագեղություն։ Սարոյանի գրական շատ կերպարներ ներկայացնում են հայկական միջավայրը՝ ազգային ավանդույթներով ու բարքերով։ Հայրենիքի մոտիվը, ինչպես և նրա դարավոր ավանդույթները պահպանող մարդկանց կերպարները հակադրվում են ապրելակերպի համահարթեցնող չափանիշներին։ Իրականության հետ նույնպիսի հարաբերության մեջ են «տարօրինակ» ու ձախորդ մարդկանց սարոյանական կերպարները ու հատկապես մանուկների և պատանիների տպավորիչ կերպարները։ Դրանք համաշխարհային գրականության մեջ մտել են որպես հոգու մաքրության խորհրդանշան։ Իրականության և երազանքի հակադրության, անհատի ներքին ազատության և հոգևոր գեղեցկության, սիրո և բարու հաստատման մոտիվներն են մարմնավորված Սարոյանի արձակում, որոնք հետաքրքրական լուծում են ստացել նաև նրա դրամաներում («Իմ սիրտը լեռներում է»), «Կյանքիդ ժամանակը», «Քարանձավի մարդիկ», «Կոտորածն մանկանց», «Խաղողի այգին»

պիեսները։ Սարոյանը հայտնի է նաև իր փոքրածավալ պիեսներով, որոնք ունեն գեղարվեստական ուրույն արժեք. դրանցից են «Հեյ, ո՞վ կա», «Ոստրեն ու Մարգարիտը», «Բան ունեմ ասելու» ռադիոպիեսը, «Ամերիկացի Մեծն Ապուշը» և այլն։

«Օտարության մեջ ապրող հայերի մեջ մեծ է Հայրենիքի հանդեպ կարոտը։ Բայց դա հիվանդություն չէ։ Դա ուժ է։ Եվ այն օգնում է ճանաչել ինքդ քեզ։ Ես՝ Ուիլյամ Սարոյանս, Արմենակ և Թագուհի Սարոյանների չորրորդ երեխան եմ, և իմ արժեքն այն է, որ ես հայ եմ, գրող։ Ես չեմ կարող ինքս իմ մասին այլ կերպ մտածել։ Ես չեմ կարող ինքս ինձ դավաճանել։ Եթե դավաճանեմ, չեմ կարողանա գրել, և այն ամենը, ինչ կգրեմ, կլինի կեղծ։ Հիմա հասկանո՞ւմ եք, թե ինչու առաջին իսկ վաստակածս գումարով եկա Հայաստան»։

Եվ պատահական չէ, որ Սարոյանի հերոսներից շատերը հայեր են, որոնք ներկայացնում են հայկական միջավայրը, հայկականը՝ օտար միջավայրում։

«Համարձակեցեք բնաջնջել Հայաստանը։ Տեսեք, թե կրնա՞ք։ Աքսորեցեք դեպի անապատները առանց հացի ու ջրի։ Այրեցեք անոնց տունն ու եկեղեցիները։ Հետո տեսեք, թե անոնք արդյոք կրկին չեն խնդա, երգե կամ աղօթե… Որովհետև, երբ անոնց երկուսը աշխարհի որևէ մասում կհանդիպեն, տեսեք, թե անոնք արդյոք մի Նոր Հայաստան չեն ստեղծե…»։

1972 թվականին Սարոյանը հրատարակել է «Վայրեր, որտեղ ես ժամանակներ եմ անցկացրել» խորագիրը կրող հիշողությունների գիրքը, որն ավելի շուտ ուղեցույց է ընթերցողի համար՝ հասկանալու Սարոյանի աշխարհը։ Գիրքը բաժանված է 68 փոքրիկ մասերի, որոնցից յուրաքանչյուրը կրում է այն վայրի անունը, որտեղ եղել է Սարոյանը՝ իր ընթերցողներին ասելով «ամենուր փնտրեք բարություն և հայտնաբերելով դուրս հանեք այն իր թաքստոցից, հնարավորություն ընձեռեք, որ նա լինի ազատ ու անկաշկանդ»։

Ուիլյամ Սարոյանը մահացել է 1981 թվականի մայիսի 16-ին, Ֆրեզնոյում։ Դիակիզումից հետո աճյունի մի մասը թաղվել է Ֆրեզնոյի Արարատյան գերեզմանատանը, մյուս մասը՝ Երևանի Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում։

1939 թվականին «Քո կյանքի ժամանակը» պիեսի համար 32-ամյա Սարոյանը արժանացավ գրականության ամենահեղինաավոր Պուլիցերյան մրցանակի, որը կազմում էր 10.000 դոլար (այդ ժամանակ ահռելի գումար էր) և որից Սարոյանը հրաժարվում է՝ (այդ ժամանակ Սարոյանը և իր

ընտանիքը կարիքի մեջ էին) պատճառաբանելով, որ պետությունը չպետք է միջամտի գրականության գործերին: Սարոյանի այս արարքն առաջացնում է ոչ միայն իր հակառակորդների, այլև առաջին հերթին իր ընտանիքի անդամների ու բարեկամների դժգոհությունը:

1943 թվականը հաջողակ դարձավ միայն Սարոյանի համար: 36 տարեկանում «Մարդկային կատակերգություն» ֆիլմի սցենարի համար նա արժանացավ ամերիկյան կինոակադեմիայի «Օսկար» մրցանակին

2018 թ. օգոստոսի 31-ին ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգի Ֆրեզնո քաղաքում՝ գրողի տանը, որտեղ նա ապրել էր իր կյանքի վերջին 17 տարիները, բացվեց գրողի տուն-թանգարանը: Տանը ցուցադրված են գրողի կյանքի տարբեր շրջաններից լուսանկարներ, Սարոյանի գունանկարներ, գծանկարներ, նրա գրքերի շապիկները:

Կենսագրական հարուստ տեղեկությունները ներկայացնելուց հետո կշռադատման փուլում զրույց-քննարկում ենք ծավալում Սարոյանի հուշերի, մտքերի, խոսքերի շուրջ՝ պարզելու համար՝ որն էր ամենատպավորիչը, որտեղ էր ամենից շատ բացահայտվում Սարոյանի ինքնությունը:

***

«Երբ մեջս գրելու պահանջ զգացի, նախ ուզեցի պարզել, ով եմ ես, ուստից կուգամ, ինչ կուզեմ ըսել: Դեռ այն ատեն հասկացա:Մինչև չիմանամ, թե ով եմ, չեմ կրնար գրել...
Ու հասկանալով, որ հայ եմ, Բիթլիսեն կուգամ, զավակն եմ Արմենակ և Թագուհի Սարոյաններու, սկսա գրել...»:

***

«Ես շատ եմ սիրում Հայաստանը : Սիրում եմ Հայաստանի քարը: Քարը միշտ սիրել եմ: Ինձ համար քարը սրբություն է: Հայաստանի քարերը նման են հայ հոգուն՝ պինդ են, ուժեղ, ոչ ոք չի կարող դրանք ջնջել:Սիրում եմ Հայաստանի քարը,արևը,ծառը...»:

***

...Կուզեի աշխարհիս երեսին տեսնել այն ուժը, որ խաթարել կարենար այս ցեղը, այս անզոր ժողովրդին… Փորձեք կործանել այս ցեղը: Կործանեցեք Հայաստանը, տեսեք՝ կկարողանա՞ք: Քշեցեք տներից անապատ, մի՛ մոռացեք խլել ճամփի հացն ու ջրի վերջին ումպը, կրակի մատնեցեք նրանց տներն ու եկեղեցիները: Տեսեք դարձյալ պիտի չապրե՞ն: Տեսեք ցեղը դարձյալ պիտի չհառնի՞, երբ նրանցից երկուսը հանդիպեն աշխարհի որևէ մասում, ծիծաղեն ու աղոթեն իրենց մայրենի լեզվով, իրենց ստեղծած Նոր Հայաստանում:

Այնուհետև «Մտագրոհի» օգնությամբ կրկնում ենք պատմվածքի ժանրային առանձնահատկությունները, շեշտում , որ Սարոյանի կարճ պատմվածքներն առանձնապես տպավորիչ են և ինքնատիպ, ներշնչված են իրական դեպքերից ու հարազատների պատմություններից։

Ներկայացնելով Սարոյանի **«Իմ անունն Արամ է»** պատմվածաշարը՝ անպայման շեշտում ենք, որ Սարոյանի գրական շատ կերպարներ ներկայացնում են հայկական միջավայրը՝ ազգային ավանդույթներով ու բարքերով։ Հայրենիքի մոտիվը, ինչպես և նրա դարավոր ավանդույթները պահպանող մարդկանց կերպարները հակադրվում են ապրելակերպի չափանիշներին։

Իրականության հետ նույնպիսի հարաբերության մեջ են տարօրինակ ու ձախորդ մարդկանց սարոյանական կերպարները ու հատկապես մանուկների և պատանիների տպավորիչ կերպարները։ Դրանք համաշխարհային գրականության մեջ մտել են որպես հոգու մաքրության խորհրդանշան։ Ուիլյամ Սարոյանի պատմվածքները հիմնված են առօրեական պատկերների վրա, չունեն դրամատիկական զարգացումներ կամ անսպասելի շրջադարձեր, իսկ հերոսներն էլ սովորական մարդիկ են, որոնցից շատերը սոսկ երազողներ են, որ ապրում են սահմանափակված աշխարհում և անկարող են իրականացնել իրենց վարդագույն երազանքները։ Բայց նրանք շարունակում են երազել, ու թեև այդ երազանքների նավակը հաճախ խորտակվում է առօրյա հոգսերի հորձանուտում, այնուամենայնիվ նրանք չեն դադարում պայքարել և յուրաքանչյուր օր ապրում են որպես բացառիկ ու կյանքի մատուցած վերջին պարգև։ Այս կերպարները գրավիչ են, միամիտ, զգացմունքային, զվարճալի ու գործում են հանպատրաստից։

Սարոյանի արձակի հիմնական կերպարը հաճախ երեխան է, որն օրեցօր բացահայտում է իրեն շրջապատող աշխարհն ու ամեն ինչում հրաշք է գտնում։ Մանկական հայացքով կերտված այս յուրօրինակ աշխարհում ամեն ինչ կանխատեսելի է ու ակնհայտ։ Սարոյանական աշխարհի երեխաներն անմեղ են, լի երազանքներով ու այդ երազանքներն իրականացնելու անհագ ձգտմամբ։

Առաջին դասի ավարտին աշակերտները լրացնում են Ուիլյամ Սարոյանի կենսագրության գծակարգը՝ օգտվելով կա՛մ դասագրքից, կա՛մ սահիկաշարից / հավելված 2/։

Ուսուցիչը հանձնարարում է տետրում նշել Ուիլյամ Սարոյանի մտքերից ամենատպավորիչն ու յուրօրինակը, նաև համացանցից կամ այլ աղբյուրներից գրել Ուիլյամ Սարոյանի մասին կարծիքներ կամ հուշեր։

***

Երկրորդ դասն արդեն պատմվածքի բառային և տեքստային վերլուծությանն ենք տրամադրում: «Անակնկալ հարցադրում» մեթոդը կիրառելով աշակերտներին ցուցադրում ենք առաջին հայացքից իրար հետ կապ չունեցող երեք պատկեր՝ Սիեռա Նևադա անապատի բնապատկերը, հասուն նռներով ծանրաբեռնված փարթամ նռենու նկար և մողեսի նկար:

5բոպեանոց շարադրանքի օգնությամբ պարզում ենք սովորողների պատկերացումներն ու մտքի թռիչքն ենք բացահայտում: Այնուհետև կարելի է մտագրոհ կազմակերպել «Ի՞նչ է գեղեցկությունը» հարցի շուրջ:



Խթանման փուլի այս աշխատանքները քայլ-քայլ մոտեցնում են պատմվածքի հերոսներին ճիշտ ընկալելուն, նաև սովորողների հետաքրքրությունն են շարժում:

Երբ արդեն բավականին խթանել ենք նրանց հետաքրքրությունը , «Ուղղորդված ընթերցում» մեթոդով կարդում ենք ընտրված հատվածները և յուրաքանչյուր հատվածից հետո աշակերտները փորձում են շարունակել անավարտ նախադասությունները և հարց ուղղել հեղինակին: Նաև աշակերտները կազմում են դեպքերի հաջորդական ընթացքի պլան, փորձում են կանխագուշակել գործողությունների հետագա ընթացքը:

- **Շարունակիր հետևյալ միտքը.**

- *«Ամենահետաքրքիրն այս հատվածում այն էր, որ.....»*
- *«Ամենահուզիչը հատվածի այն մասն է, երբ.....»*
- *Ի՞նչ կհարցնես հեղինակին պատմվածքի այս հատվածի շուրջ:*

Միեռա Նևադա

Երկրորդ հատվածից հետո միջառարկայական կապ ենք հաստատում կենսաբանության հետ՝ ներկայացնելով էլգրատախտակին քարադոդոշի / մողեսի պատկերներ:

Իհարկե ընթացքում դուրս ենք գրում և բացատրում անծանոթ բառերն ու արտահայտությունները /հավելված 3/:

Պատմվածքից կարելի է առանձնացնել երեք կամ չորս ընդարձակ հատված, որոնք առավել հարուստ են խորիմաստ արտահայտություններով, արտահայտում են հիմնական գաղափարը, բացահայտում են հերոսների ներաշխարհը: Դրանց շուրջ ծավալում ենք քննարկում: Հատկապես հետաքրքիր է պատմվածքի առաջին և վերջին հատվածների նկարագրությունների համեմատումը:

Ընթերցե՛ք պատմվածքի առաջին և վերջին հատվածները նկարագրությունները համեմատելով: Ի՞նչ է նույնը, ի՞նչ է փոխված, ի՞նչ ընդհանրություն կա պատմվածքի հերոսների և այդ նկարագրությունների միջև:

Իմ հորեղբայր Մելիքը երևի աշխարհի ամենաաչխողակ ագարակատերն էր: Սեփական երևակայության ձեռքը կրակն էր ընկել: *Միրտը գեղեցկություն էր ուզում. ուզում էր, որ ծառ տնկի ու աճելը տեսնի: Ես իմ ձեռքով հարյուրից ավելի նոնենի եմ տնկել:* Ես էլ հորեղբորս պես «Ջոն Դիրի» տրակտոր եմ քշել: *Սա հողագործություն չէր գուտ արվեստ էր: Հորեղբորս դուր էր գալիս ծառեր տնկել ու նայել, թե ինչ են աճում:* Հակառակի պես չէին աճում: Պատճառը հողն էր: Չոր էր: Ոնց որ անապատ: Հորեղբայրս, ձեռքը իր գնած վեց հարյուր քառասուն ակր տափաստանի կողմն անելով, երբեք արտաբերած *ամենահուզական հայերենով* ասել էր. -*Էստեղ, էս ահավոր անապատում ծաղկանոց կբացվի, հողի տակից սառն աղբյուրներ կբխեն, ու մի սքանչելի հեքիաթային գեղեցկություն կստեղծենք:*

Մի խոսքով, հորեղբայրս հողը կորցրեց, ծառերն էլ հետը:

Մի քանի տարի անց միասին էդ հողամասը գնացինք ու բայլեցինք նոնենիների այգու կողմը: Ծառերը մեկի պես չորացել էին: Հողը էլի կակտուսներով ու տափաստանային մացառներով էր ծածկվել: Չորացած նոնենիները չհաշված տեղանքը աշխարհի արարումից ի վեր ունեցած առաջվա տեսքն էր ստացել:

Մեռած այգու մեջ մի քիչ պտտվեցինք ու մեքենան վերադարձանք:

Նստեցինք ու քաղաք քշեցինք:

Ոչինչ չասացինք, որովհետև էնքա՜ն ասելիք կար, որ ոչ մի լեզվով չէիր ասի:

Ընթերցանության դասի ավարտին աշակերտները լրացնում են «Քառաբաժան» աղյուսակը, մատնանշում են անհատական զգայական ընկալումները, վեր են հանում՝ ինչ կերպ է արտահայտվում տեքստում հույզը, զգացմունքը, ապրումը /հավելված.5/:

Եվ վերջում իհարկե «***Ելքի քարտ»***

Ի՞նչ սովորեցի (4 բան) • ---------- • ---------- • ---------- • ----------
Նախապես գիտեի (3 բան) • ---------- • ---------- • ----------
Կուզեի առավել շատ իմանալ (2 բան) • ---------- • ----------
Շատ կարևորեցի (1 բան) • ---------- ----------

Դասի ավարտին արդեն ձևավորված խմբերը ստանում են առաջադրանքներ։ Առաջին խումբը պետք է տեղեկություններ հավաքի և հաջորդ դասին ներկայացնի, նռան օգտակար հատկությունների մասին, երկրորդ խումբը պիտի բացահայտի նռան խորհուրդը, մի խումբ աշակերտներ էլ ուսումնասիրելու էին հայկական ճարտարապետության, մշակույթի մեջ նռան և նռնենու դրսևորումները։

***

«Նռնենիները» պատմվածքը կարծում եմ նախընտրելի է ուսուցանել երեք կամ չորս դասաժամով։ Հաջորդ դասը, երբ սովորողները ամբողջությամբ ընթերցել, ընկալել ու մեկնաբանել են պատմվածքը, նվիրում ենք *կերպարներին ու գաղափարի բացահայտմանը*։
Աշակերտներն անհամբեր սպասում էին իրենց պատրաստած նյութերը ներկայացնելուն։

Ահա մի քանի սահիկ աշակերտների պատրաստած նյութերից:







Որպես նախորդ դասի աշխատանքի ամփոփում՝ մենք դասաժամը սկսեցինք «Տեքստի քարտեզի» լրացմամբ: Աշակերտներն աշխատում էին զույգերով՝ օգնելով ու լրացնելով միմյանց: Համագործակցային քննարկումը աշակերտների հաղորդակցման կարողությունները զարգացնելու լավ եղանակ է: Զույգեր ձևավորելիս նախընտրում եմ «Միասին սովորող զույգեր» մոտեցումը, երբ աշակերտներից մեկն իր ընդունակություններով զիջում է մյուսին: Ավելի բարձր ընդունակություններով աշակերտը կատարում է «ուսուցչի» դերը (ուսանում ուսուցանելու

ընթացքում): Այնուհետև աշխատանքը ներկայացնելիս «ուսուցիչ» -աշակերտը պակաս եռանդուն է լինում /պասսիվ/ ՝ հնարավորություն ընձեռելով ընկերոջը /հավելված 6/ :

«Տեքստի քարտեզը» լրացնելիս սովորողները օգտվում են տեքստից, ևս մեկ անգամ վերընթերցում ու վերհիշում որոշ հատվածներ: Հաջորդ աշխատանքն արդեն կերպարների բացահայտմանն է միտված: Այս անգամ կազմել եմ երեք տարբեր մակարդակով իրականացվող ուսման գործընթացի աշխատանքային թերթիկներ: Առաջին և երկրորդ մակարդակի թերթիկներով աշխատող սովորողները նկարագրում և բնութագրում են պատմվածքի հերոսներին, իսկ երրորդ մակարդակի աշխատանքը միտված է ստեղծարարության զարգացմանն ու երևակայության խթանմանը: Ընտրելով որևէ տարբերակ նրանք կարճ ժամանակահատվածում /5-10րոպե/ պատմվածքի համար այլ վերջաբան հորինեցին:

1–ին մակարդակ	2–րդ մակարդակ	3–րդ մակարդակ
• ավելի հեշտ • ավելի պարզ • ավելի քիչ տեղեկություններ	«Միջին» աշակերտի համար մշակված աշխատանքային թերթիկ	ավելի բարդ • ավելի համընդգրկուն • ավելի մեծ ծավալով տեղեկություններ


Թվարկի՛ր «Նռենենիները» պատմվածքի կերպարները, պատմվածքից դու՛րս բերեր երանց բնութագրող տողերը:

	Կերպարները	Կերպարին բնութագրող տողերը
1.		
2.		
3.		
4.		


ԻՆԹՐԱՈՒՐՈՒՅՑ ԱՇԽԱՏԱՆՔ

Ներկայացրու՛ «Նռենենիները» պատմվածքի գլխավոր հերոսների արտաքին նկարագրող, բնավորությունը բացահայտող էական գծերը:

Կերպար	Արտաքին նկարագրություն	Նկարագրի՛ր կերպարի երկու վարքագիծ (բնավորությունը բացահայտող)	Պատմվածքից կենելով՝ բացատրի՛ր, թե ինչու նա այդպես վարվեց:

Ինքնուրույն աշխատանք

Պատմվածքի համար այլ վերջաբան հորինի՛ր.

- ա)եթե անապատում ջուր հայտնաբերվեր...
- բ) եթե հողակտորի սեփականատերը թույլ տար խնամել ծառերը...
- գ)եթե 11 արկղ նուռը հաջող վաճառվեր...
- դ)...այլ...

Դիտման մեթոդը հետազոտության հնագույն մեթոդն է: Դրա օգնությամբ կարելի է մարդու մասին լայն տեղեկություններ ստանալ:

Այն անփոխարինելի է այնտեղ,որտեղ մշակված չեն ստանդարտացված ընթացակարգեր:

Դիտման մեթոդը չափազանց մեծ նշանակություն ունի երեխաների հոգեբանական առանձնահատկություններն ուսումնասիրելու համար,քանի որ նրանք մեծ խնդիրներ են առանջնացնում փորձարարական հետազոտության ընթացքում:

Ամփոփելով «Նռնենիները» պատմվածքը աշակերտները բացահայտեցին, որ Արամի հորեղբայր Մելիքը որոշում է նռնենի աճեցնել անապատում սոսկ այն պատճառով, որ այդ պտուղը նրան հիշեցնում է իր հայրենիքն ու իրական արմատները, իսկ Արամը, վստահ լինելով այս նախաձեռնության անհաջողության մեջ, չի կանգնեցնում հորեղբորը, քանի որ ակնածանքն ստիպում է նրան լռել, ու միգուցե նաև ինչ-որ ներքին զգայականություն ստիպում է նրան նաև հարգել հորեղբոր երազանքը: Սկզբում աշակերտների մոտ զարմանք առաջացրեց այն փաստը, երբ հորեղբայր Մելիքը այդքան տառապանքով աճեցրած նռան բերքը նախընտրեց չվաճառել՝ էժան չվաճառել, որ նա այդ քայլով ավելի էր խորացնում իր նյութական ծանր վիճակը: Սակայն հետո հասկացան, որ հորեղբայրը գերադասում էր ստանալ հոգեկան բավարարվածություն, իսկ Արամը նրան չէր խոչընդոտում, որովհետև ամերիկյան մտածելակերպով հանդերձ՝ ուներ հայկական արմատներ ու ինչ- որ տեղ կիսում էր այդ հոգևոր բավարարվածությունը: Աշակերտներից շատերը հերոսների մեջ ձգտում ու լավատեսություն էին նկատել, աշխատասիրություն և հավատ, բայց նաև ափսոսանք հայտնեցին, որ ոչ միշտ է ձգտումն իրականություն դառնում: Եվ թե՛ հերոսներին, թե՛ բոլոր հայերիս հատուկ լավատեսությամբ աշակերտները բացահայտեցին, որ Սարոյանը գուցե ակնարկում է, որ թեև մեր հերոսը չիրագործեց իր երազանքը, բայց ինչքան էլ մարդ դժվարությունների հանդիպի, երբեք չպետք է հուսահատվի և թուլանա, այլ ավելի ուժեղանա և առաջ նայի:

1.Ինչպիսի՞ն է հայի տեսակը՝ ըստ Ու.Սարոյանի պատմվածքի:

Եղան այսպիսի պատասխաններ.

- Սարոյանի հայ հերոսները չեն վախենում պարզ,անմիջական և ջերմ լինելուց:
- Նրանք կարողանում են ամեն ինչի մեջ տեսնել գեղեցիկը, զարմանալին:

- Աշխատասեր են։ Շահը,օգուտը նրանց կյանքում գտնվում են երկրորդական, եթե ոչ վերջին տեղում։
- Ու. Սարոյանի «Նռնենիները» պատմվածքի կերպարները վերլուծելով՝ հասկանում ես, որ աշխարհի որ ծայրում էլ ապրի հայը, երազում է Հայաստանի մասին։

2.Ի՞նչ կարևոր տարրեր կան, որոնք հային հայ են պահում, տեսակը պահպանում, աշխարհի որ ծայրում էլ լինի։

Աշակերտները համակարծիք էին, որ՝

- Աշխարհի բոլոր ծայրերում գտնվող հայերին միասնական է պահում մեր լեզուն, մեր հավատքը և մեր *սերը դեպի հայրենիք*։
- Հայի համար հայրենիքն ու հավատքը ամեն ինչից վեր են, դրանք նրա սրբություններն են, որոնց համար նա պատրաստ է կյանքը տալ. *ինքնազոհությունը* հայի մեծագույն հատկանիշն է։
- *Երազելը*…հայի ամենաբնորոշ. ամենագեղեցիկ հատկանիշներից մեկն է։
- Եվ պատմվածքի ամփոփման վերջում աշակերտները միաբերան հաստատեցին, որ

Անկախ նրանից, թե հայը որտեղ է գտնվում,նա ամեն գնով փորձում է պահել իր ինքնությունը։

Հավելվածներ

Հավելված 1. ԳՈՒՍ

Դասի սկզբում		*Դասի վերջում*
Գիտեմ +	*Ուզում եմ իմանալ?*	*Սովորեցի!*

Հավելված 2. Ուիլյամ Սարոյանի կենսագրության գծակարգ

Տարեթիվը	Դեպքեր և փաստեր
1908	
1911	
1922	
1926	
1933	
1934	
1935	
1939	
1940	
1943	
1964	
1975	

Հավելված. 3

Բառը	*Բացատրությունը*	*Հոմանիշը*	*Հականիշը*	*Նախադասությունը, որում կիրառված է բառը:*

Հավելված. 4 Պլան

1.	Հորեղբայր Մելիքն ու իր երազանքը
2.	«Ագարակի» խորհրդավոր բնակիչները
3.	Դժվարություններն հաղթահարելու ծրագիրը
4.	Հրաշք այգի հիմնելու գաղափարը
5.	Մեքսիկացիների «անօգուտ» աշխատանքը
6.	«Ջոն Դիրի» տրակտորը
7.	Ջրի խնդիրը
8.	Նռնենիների տնկումը
9.	Երեք փոքրիկ նուռ
10.	200 նուռ / 11արկղ նուռ
11.	Անհաջող գործարք
12.	Հողակտորի վերադարձը և պարոն Գրիֆիթի զարմանքը
13.	Տխուր կորուստ

Հավելված.5 Քառաբաժան

1. Ի՞նչ էի տեսնում, լսում պատմվածքը կարդալիս։	*2.Ի՞նչ էի զգում պատմվածքը կարդալիս։*
3. Կապը ձեր և իրական կյանքի հետ։	*4. Նոր վերնագիր*

Հավելված.6

Հարցեր	Պատասխան Գտի՛ր տեքստից և լրացրո՛ւ
Ինչի՞ մասին է այս պատմությունը:	
Ո՞վ է պատմում դեպքը:	
Ո՞վ է գլխավոր հերոսը/ հերոսները:	
Ի՞նչ է անում կամ ի՞նչ են անում հերոսները:	
Ե՞րբ է կատարվում այս դեպքը:	
Որտե՞ղ է դեպքը կատարվում:	
Ինչո՞ւ է հորեղբայր Մելիքն ուզում այգի տնկել:	
Ինչո՞ւ է վստահում միայն Արամին:	
Ի՞նչ ծառեր էր ծրագրում տնկել հորեղբայրը:	
Ո՞ւմ հանդեպ է հորդորում բարի լինել հորեղբայրը: Ի՞նչու:	
Ինչու՞ միայն նոնենիներ տնկեց:	
Իրականանու՞մ է հորեղբայր Մելիքի երազանքը: Ինչու՞:	
Ինչու՞ չէին վաճառվում պտուղները:	
Ինչու՞ չհասկացավ հերոսներին պարոն Գրիֆիթը:	
Ի՞նչ տրամադրություն է հաղորդում ինձ այս պատմությունը:	
Ի՞նչ է ուզում ընթերցողին ասել Սարոյանը: ;	

Օգտագործված գրականության ցանկ

1.Վիլյամ Սարոյան «Ընտիր երկեր» 4 հատորով, հատոր 1, Սովետ. գրող 1986:

2.«Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն»,Լաուրա Ասատրյան,Գրետա Հակոբյան (ուսումնական ձեռնարկ) Երևան Արտագերս 2011:

3.http://vahe.ucoz.ru/index/ditarkman_met_od/0-38

4.Գոհար Թադևոսյան «Որակական սոցիալական հետազոտություններ։ Տեսություն, մեթոդաբանություն և մեթոդ (ուսումնական ձեռնարկ) Երևանի համալսարանի հրատարակչություն 2006: